



ՊԱՇՏՈՆ
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
 ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱԺԱՄԿԵՏ
 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Հեռախոսազանգերի կենտրոնի մասնագետ
 Լրիվ դրույք (երեկոյան և գիշերային հերթափոխ)
 ք. Երևան, ՀՀ
 Հնարավորինս շուտ
 22/08/2022
 05/09/2022
 Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի Հեռախոսազանգերի կենտրոնի մասնագետի հաստիքը զբաղեցնելու համար, ով պատասխանատու է երեկոյան և գիշերային հերթափոխի ժամերին ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մուտքային զանգերի սպասարկում,
- Ելքային զանգերի իրականացում,
- Գործարքների իրականացում,
- Քարտային հայտերի ընդունում,
- Բանկի հեռահար ծառայություններից օգտվող հաճախորդներին տեխնիկական աջակցության տրամադրում,
- Բանկի հեռահաղորդակցման ուղիների միջոցով հաճախորդների սպասարկում,
- Հեռահաղորդակցման ուղիների միջոցով վաճառքի իրականացում,
- Արագ դրամական փոխանցումների իրականացում և վերահսկում,
- Հեռախոսազանգերի կենտրոնի հետ առնչվող այլ աշխատանքների իրականացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն(կոլիտարկվեն նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողները),
- Համապատասխան փորձի առկայությունը կոլիտվի որպես առավելություն,
- Ռուսերեն, անգլերեն լեզուների իմացությունը,
- Համակարգչային գիտելիքներ,
- Հաղորդակցվելու և թիմում աշխատելու հմտություններ,
- Բանակցելու և խնդիրներ լուծելու հմտություններ,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն,
- Կազմակերպչական հմտություններ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն Նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>